ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«24» փետրվարի 2025թ. № 161

ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ ՀՈՍԱՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ԳՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով Սպիտակի համայնքապետարարանի աշխատակազմի ցանցային ադմինիստատոր Վահե Մաթոսյանի 2025 թվականի փետրվարի 21-ի զեկուցագիրը, Սպիտակի համայնքապետարանի համացանցի սպասարկիչի անխափան աշխատանքի համար հոսանքի կարգավորիչ ձեռք բերելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2025 թվականի բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» գործառական դասակարգման «Այլ մեքենաներ և սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման 5129 հոդվածից հատկացնել 33 000 ՀՀ դրամ:
2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. փետրվարի 24
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«24» փետրվարի 2025թ. № 162

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈԳԱՐԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐԱՀԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի առաջատար մասնագետ Նարեկ Սողոմոնյանի 2025թ փետրվարի 24-ի զեկուցագիրը, Գոգարան բնակավայրի հանդիսությունների սրահի գազաֆիկացման աշխատանքների համար անհրաժեշտ ապրանքներ գնելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2025 թվականի բյուջեի «Նավթամթերք և բնական գազ» գործառական դասակարգման «Շենքերի և շինությունների կառուցում» տնտեսագիտական դասակարգման 5112 հոդվածից հատկացնել 102 000 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. փետրվարի 24
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 25 » փետրվարի 2025 թվականի N 163

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՆԵԼՍՈՆ ԲԵՆԻԱՄԻՆԻ ԲԵԳԼԱՐՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 112-րդ հոդվածի 2.1-ին մասով, 130-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի Լեռնավան բնակավայրի վարչական ղեկավար Նելսոն Բենիամինի Բեգլարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. 2025 թվականի փետրվարի 26-ին Սպիտակ համայնքի Լեռնավան բնակավայրի վարչական ղեկավար Նելսոն Բենիամինի Բեգլարյանին ազատել զբաղեցրած պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2022 թվականի հունվարի 14-ին կնքած թիվ 24 աշխատանքային պայմանագիրը:

Աշխատանքային հարաբերությունների ավարտը համարել՝ 2025 թվականի փետրվարի 25-ը:

2. Նելսոն Բեգլարյանին՝ 2025 թվականի փետրվարի 25-ին կատարել գույքի և փաստաթղթերի հանձնում-ընդունում:

3. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ և վճարել:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. փետրվարի 25
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«25» փետրվարի 2025 թվականի N 164

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԹՆԱՋՈՒՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՀԵՐՄԻՆԵ ՍԱՆԱՍԱՐԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանի հավելվածի 85-րդ կետով, հաշվի առնելով, որ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Կաթնաջուրի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2024 թվականի դեկտեմբերի 26-ին հայտարարված մրցույթը չի կայացել, և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանի հավելվածի 21-րդ կետի համաձայն Սպիտակ համայնքի ղեկավարի 2024 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 1198 որոշմամբ հայտարարվել է նոր մրցույթ, որը կանցկացվի 2025 թվականի մարտի 11-ին, հիմք ընդունելով Հերմինե Սանասարի Նիկողոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Կաթնաջուրի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հերմինե Սանասարի Նիկողոսյանի պաշտոնավարման ժամկետը երկարաձգել մինչև տնօրենի թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված անձի կողմից զբաղեցնելը, բայց ոչ ավելի, քան երեք ամիս ժամկետով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. փետրվարի 25
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«25» փետրվարի 2025թ. № 165

ՋՐԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ 1998 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 63 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածով և «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով Սպիտակ համայնքը հանդիսանում է նախկին Ջրաշեն համայնքի իրավահաջորդը և քանի որ Ջրաշենի գյուղապետի 1998 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 63 որոշման մեջ Կարինե Նորիկի Պողոսյանի (ծնված՝ 28.02.1992թ.) ծննդյան տարեթիվը սխալմամբ գրվել է «1990», Հայկ Նորիկի Պողոսյանի (ծնված՝ 01.03.1994թ.) ծննդյան տարեթիվը սխալմամբ գրվել է «1991», հիմք ընդունելով Կարինե Նորիկի Պողոսյանի և Հայկ Նորիկի Պողոսյանի անձնագրային տվյալները և Նորիկ Հովհաննեսի Պողոսյանի ներկայացուցիչ Ռոման Հայկի Ղուկասյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ջրաշենի գյուղապետի 1998 թվականի դեկտեմբերի 30-ի «Կիսակառույց բնակարանի սեփականաշնորհման մասին» թիվ 63 որոշման մեջ գրված «1990» թիվը փոխարինել «1992» թվով, իսկ «1991» թիվը փոխարինել «1994» թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. փետրվարի 25
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«25» փետրվարի 2025թ. № 166

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-095-0216-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,1 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 02042024-06-0021 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06172XKBWUMR) և Սեդրակ Հովհաննեսի Վարդանյանի (ծնված՝ 17.08.1963թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրում գտնվող 06-095-0216-0004 կադաստրային ծածկագրով 0,1 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Ջրաշեն, 1-ին փողոց, 2/4 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1821):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. փետրվարի 25
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«25» փետրվարի 2025թ. № 167

ՆՈՐԻԿ ՄԱՐՏՈՒՆԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ՝ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԻ ՄԱՍՈՎ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 54-րդ և 55-րդ հոդվածներով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2012 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 380 որոշմամբ Նորիկ Դանիելյանի կողմից իրականացվող շինարարությունը կասեցվել է, որոշումը վարչական կամ դատական կարգով անվավեր կամ առոչինչ չի ճանաչվել, և Նորիկ Դանիելյանը շինարարական աշխատանքներ իրականացնելու իրավունք չի ունեցել, իսկ ավարտական ակտը «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն տրամադրվում է շենքերի, շինությունների շինարարության թույլտվության համար հիմք հանդիսացող հաստատված ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ ***որոշում եմ.***

1. Նորիկ Մարտունի Դանիելյանի 2025 թվականի հունվարի 30-ի դիմումը՝ ավարտական ակտ տրամադրելու մասով մերժել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նորիկ Մարտունի Դանիելյանին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Սպիտակ համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. փետրվարի 25
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«27» փետրվարի 2025թ. № 168

ՌԻՄԱ ԳԱՌՆԻԿԻ ՉՈԲԱՆՅԱՆԻՆ ՑՈՂԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՉԱԲՈՒԽՅԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և 37-րդ հոդվածի 1-3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությամբ, հիմք ընդունելով Ռիմա Գառնիկի Չոբանյանի դիմումը, թիվ ԼԴ4/0084/02/24 քաղաքացիական գործով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի վճիռը, Սպիտակ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2025 թվականի փետրվարի 26-ի եզրակացությունը՝ որոշում եմ.

1. Ռիմա Գառնիկի Չոբանյանին (ծնված 02.01.1956թ.) նշանակել Ցողիկ Հովհաննեսի Չաբուխյանի (ծնված 00.00.1930թ.) խնամակալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. փետրվարի 27
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«27» փետրվարի 2025թ. № 169

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0141-0016 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ, 60-րդ և 62-րդ կետերով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի, Սպիտակ քաղաքի վարչական տարածքում գտնվող 06-006-0141-0016 կադաստրային ծածկագրով հողամասին և դրա վրա գտնվող 52,0 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը տրամադրված «Լոռու մարզ, ք. Սպիտակ Տաշիր թաղամաս թիվ 32 բ բնակելի տուն» հասցեն չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներին, հիմք ընդունելով 2025 թվականի փետրվարի 13-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը (գրանցված է սեղանամատյանում N 383), Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի առկա հասցեի փոփոխության հայտի հաստատումը (քաղվածք՝ 06011MCEMDRG) և Արկադի Մանվելի Սահակյանի ներկայացուցիչ Անուշ Մաքսիմի Գալոյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Սպիտակ քաղաքի վարչական տարածքում գտնվող 06-006-0141-0016 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,02 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և դրա վրա գտնվող 52,0 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան առկա «Լոռու մարզ, ք. Սպիտակ Տաշիր թաղամաս թիվ 32 բ բնակելի տուն» հասցեն փոփոխել «Սպիտակ համայնք, Սպիտակ ք., Տաշիր թաղամաս, 31/1 բնակելի տուն» հասցեով (փոստային դասիչը՝ 1801):

2. Սույն որոշման 1-ին կետով նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ.փետրվարի 27
ք.Սպիտակ